ՔՍԷՆԵՒԶՈՐԻՈՐԴ—ՏԱՐԻ—ԹԻՒ—1699—ՀԻՆԳՇԱԲԹԻ—26—ՅՈՒՆԻՍ—Ն. Տ.—8—ՅՈՒԼԻՍ—1875

ԳԱՅՄԱՆ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 Մէջ.
» Գաւառաց » 10 Մէջ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ » 4 Մէջ.
» Գաւառաց » 5 Մէջ.
Ուրբաթանչիւր թերթի գին 60 փարա։ Յանուն ոմանց տողը մէկ անգամի համար 3 ղուրուշ, երկու անգամի համար 2 ղուրուշ, աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լլայ։

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԱՅՄԱՆ

Դուրս գացած լրագրաց համար նախքը խմբագրութեան վրայ։

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր—Յնարէնին պիտի ուղղուի, Կ. Պոլիս, Զինիլի խան, Մոսիսի գրասենեակը։

Համբաւ. նախքը չկնքուած նամակ չընդունուիր։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 26 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 5 յուլիս.

Ազգային ժողովոյ աջ կեդրոնն որոշեց որ ընտրական օրինաց քուէարկուելէն առաջ ժողովոյ լուծմանը վերաբերեալ որ եւ է որոշում չընէ։ Ժողովին այս տարի լուծմանն այն ժամանակ միայն հաճութիւն պիտի տայ, երբոր երեսփոխանական ընտրութիւնները նահանգական շրջանակներու վրայ բաժնելու առաջարկութիւնն ընդունուի։ Զախաւոր և ծայրագոյն աջակողմեանք բոլորովին կը մերժեն ժողովին լուծումը։

Վիէննա 6 յուլիս.

Հրաժարեալ Ֆէրտինանտ կայսեր յուղարկաւորութիւնն այսօր կատարեցաւ մեծ բազմութեան ներկայութեամբ։

Բոլոր ժողովուրդն ոտքի վրայ էր։ Կայսերական ընտանիքը, Ռուսիոյ, Գերմանիոյ և Իտալիոյ գահաժառանգները, տէրութեան բարձր պաշտօնաւորներն և դաւառաց պատգամաւորութիւնները մեծ շուք կուտային այս տխուր արարողութեան։

Վախճանելոյն մարմինն արքունեաց մատուռէն հանուելով քարուշինաց եկեղեցւոյն դամբարանը տարուեցաւ։

Միլան 6 յուլիս.

Կը հաւատան թէ Գերմանիոյ կայսրը յառաջիկայ հոկտեմբերին Միլան պիտի գայ յայցելութիւն Վիքթոր Էմմանուէլ թագաւորին։

Փարիզ 7 յուլիս.

Ազգային ժողովոյ ձախակողմեան դիւաններն որոշեցին՝ յառաջիկայ հոկտեմբեր ամսոյ մէջ լուծուելու առաջարկութիւն ներկայացնել ժողովին։

Տօն Քարլոսի հայրը Լէնտէյի մէջ բռնուելով Պայոն տարուեցաւ։

Սպանիայէն եկած լուրերը կը ծանուցանեն թէ Քարլոսեանց Տորրէկարէզ զօրապետը փախեր է։

Փարիզ 7 յուլիս իրիկուն.

Ազգային ժողովն երկրորդ ընթերցմամբ քուէարկեց հասարակային իշխանութեանց վերաբերեալ օրէնքը։

Արմատական երեսփոխան Պ. Մարքուի առաջարկութիւնն, որ ազգային ժողովոյ մնայուն թիւնը կը խնդրէր, 25 ի դէմ 604 ձայնիւ մերժուեցաւ։

Ժողովին լուծման առաջարկութիւնը ձախ կեդրոնէն չընդունուելով չկրցաւ ներկայանալ ժողովին, և յետաձգեցաւ։

Տօն Քարլոսի հօրը՝ Տօն Ժուանին՝ ձերբակալութիւնը սխալ հասկացողութեան արդիւնք ըլլալով թող տրուեցաւ, և Լոնտրա պիտի երթայ։

Լոնտրա 6 յուլիս.

Թայմզ լրագիրը Գերմանիոյ հետ պատերազմն անհրաժեշտ կը համարի, որոյ հետեւանքը պիտի ըլլայ երկրին գրաւումն եթէ թագաւորը չուզէ թոյլ տալ որ Անգղիական զօրքն իւր հողէն անցնի պէտք եղած ժամանակ։

Վիէննա 7 յուլիս.

Ռուսիոյ և Իտալիոյ գահաժառանգներն այս առաւօտ մեկնեցան քաղաքէս։ Գերմանիոյ գահաժառանգն ալ այս իրիկուն պիտի մեկնի։

Փարիզ 7 յուլիս իրիկուն.

Ժողովն հասարակային իշխանութեանց վերաբերեալ օրինաց բոլոր յօդուածներն հետզհետէ քուէարկելէ ետեւ 97 ի դէմ 546 ձայնիւ որոշեց երրորդ ընթերցման անցնիլ։

Լոնտրա 6 յուլիս.

Սամ. Քոնս.		42 3/8
Փոխ	1865	65 1/2
»	1869	53 7/8—54
»	1871	63 3/4
»	1872	83 7/8—84
»	1873	51 7/8

Նոր փոխառութիւն

Անգղ. Քոնս. 94 1/8

Լիվերբուլ 6 յուլիս.

Բամպակ Միսիսիպի—Օրլեան 7 3/8
» Ֆայր Տօլէրաս 5 1/8

Ցախուած 12000 հակ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Թաղի կառավարիչ Մահզար փաշան Պաղտատի գաւառագլխոյն գայմագամ անուանեցաւ փոխանակ Ասէֆ էֆէնտիին, որ Թաղի կառավարիչ անուանեցաւ.

Վեցերորդ շրջանակի թաղապետական խորհրդին նախորդ նախագահ Ըէրթէվ էֆէնտին Տպագրական դիւանին տնօրէն անուանեցաւ.

Մաքսուտեան վեր. Սիմոն պէյ՝ Պէյքօզի նորակազմ թաղապետութեան նախագահ անուանեցաւ։

Դարձեալ Կայսերական հրամանաւ՝

Վեհ. Սուլթանին թիկնապահ Իպրահիմ պէյ արքունի սենեկապան անուանեցաւ.

Թնդանօթաձիգ զօրաց գնդապետի տեղակալ Քէմալ պէյ և Ադրիանուպոլսոյ կուսակալին փեսայ և ծովային զօրաց հաշտարարապետ Ահմէտ Բաթիպ պէյ՝ Վեհ. Սուլթանին թիկնապահ անուանեցան։

Կը սուի թէ Կ. Պոլիս մոտ նըպարեղինաց վրայ քաղաքային տուրք մը դնելու կանոնագիրը նախարարաց խորհրդէն ընդունուեր է։ Յիշեալ կանոնագիրը կը տրամադրէ թէ քաղաքային այս նոր տրոց հասոյթն Օսմ. Պանքային պիտի յանձնուի, նաեւ Կ. Պոլսոյ քաղաքապետութեան և այլ այլ թաղապետութեանց նախագահներուն առաջարկութեանց համեմատ փողոցներու շինութեան և մաքրութեան վերաբերեալ ծախքերը պիտի վճարէ։

Եաֆայէն հեռագրով լուր կուգան թէ Եբուսաղէմայ Յունաց նորընտիր Եպիսկոպոս պատրիարքը շաբաթ օրը Եաֆա հասեր և տեղական իշխանութիւններէն ու ժողովրդէն պատուով ընդունուեր է։ Կիրակի օրն ալ Եաֆայէն Երուսաղէմ գնացեր է։

Գաղղիոյ հարաւային ողողեալ գաւառաց բնակիչներուն օգնութեան համար հոգանակութիւնք բացուեցան Անգղիոյ, Իտալիոյ և այլ Եւրոպական երկիրներու մէջ։

Մայրաքաղաքիս մէջ ալ Գաղղիոյ հիւպատոսարանն և Լա Թիւրքիի խմբագրութիւնը հանգանակութիւն բանալով օգնութեան հրաւէր կը կարդան հարուստ և առատասիրտ անձանց։

Կիրակի օրն Իզմիտէն եկող շոգեկառքը Թուզլայի կայարանին մօտ ճանբուն վրայ պառկած գործաւորի մը վրայէն անցնելով երկու կտոր ըրաւ զայն։

Երկուշաբթիէն երեքշաբթի լուսնալու դիշերը Բէրա տան մը բաց մնացած պատուհանէն ներս դող մտնելով, հոն պառկած տանտիրոջ ժամացոյցը, կնիքը և շապկին ոսկի կոճակները վերուցեր տարեր է, ընդամենը 600 ֆրանքի բան։

Երեքշաբթի իրիկուն մեծ կղզին փոթորիկ մ'եղնելով, շոգենաւին մեքենավարն՝ որ նաւամատոյցին վրայ կը պարտէր, հովին ուժգնութենէն դորեցաւ ծովն ինկաւ, և չկրնալով ազատիլ՝ խեղդուեցաւ։ Ոչխար տանող երկու մակոյնա ալ ցամաքն իյնալով խորտակեցան։ Ասոնցմէ զատ բազում մակոյներ կոտրտեցան և և խոշոր ծառեր արմատախիլ եղան։

Արնավուտ դեղ հարուստի մը տունը պարտիզպանութիւն ընող խրատ մ' երկուշաբթի օրը ծովը մտնելով խեղդուեցաւ։

Մարաշէն կը գրեն թէ յունիս 13 ին սահդ փոթորիկ մ'եղնելով և յորդ անձրևներ գալով Ախօմոզ ըսուած լեռնէն վազած առուներն ստուարացեր և քաղաքին քանի մը թաղերը կոխելով բազմաթիւ տուներ, խանութներ, աղօրիներ և կամուրջներ քանդեր են, քսանէն աւելի անձինք փլատակաց ներքև թաղելով Ա շակեալ արտերն ալ մեծ տարածութեամբ աւրուեր են։ Եղած վնասը 25000 լիրայէն աւելի կը հաշուուեն։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԵՍԱՅԻՆ ՍԻՄՈՆԻ։

25 յունիս չորեքշաբթի իրիկուն 47 19

26 յունիս հինգշաբթի առաւօտ

բացուելիս.	47 18
կէս օր	47 16

Կ. Պոլիս 25 յունիս

Ամսէրլէնէնիրայի բաժին	Անգղիր.	7,30
» Փոխանակութեան	»	5,30
Կ. Պոլսոյ Պանքային	»	5,30
Ֆրէնտի Ժէնէրալ	»	9,30
Ֆրէնտի Օսմիրոս—Թիւրք		— —
Եբկոմիտուղեան	Ֆր.	122 1/2
Փոխ. 1863	»	333
» 1865	»	333
» 1869	»	273
» 1872	»	84 1/2
» 1873	»	264
Թրամուէյ	Սամ. լիր	3 20

ԸՆԹԱՑԵԱԼ ԳՐԱՒՈՒՄՆԵՐ

25 ՅՈՒՆԻՍ

Անգղ. լիրա	դրամ.	110,30
Նապոլէոն ուկի	»	88 6
Իմբէրիալ Թուս	»	89 30
Գրը մը	»	51 25
Հինգ ֆրանք	»	—
Հնդկոց	»	105 5
Պլինտ	»	131

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

ԹԱՂԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Ռուսինեան էֆէնտի, Սահմանադրութեան վերաքննիչ յանձնաժողովոյ տեղեկագրին վրայ Զեռնհասութեան դիւանին մեծամասնութեան կողմէ ազգային ժողովոյ վերջընթեր նոտին ներկայացուցած տեղեկագրին մէջ՝ Սահմանագրութեան քանի մը կէտերուն վրայ կարեւոր դիտողութիւններ և վերաքննութեան առաջարկութիւններ կընէ, որոյմէ մին է թաղային ժողովներ հաստատելու առաջարկութիւնը։

«Ազգին մէջ երեք կարգ մատակարարութիւն կայ, կըսէ, որ երեք շրջանակ կը կազմեն. կեդրոնական մատակարարութիւն, գաւառական մատակարարութիւն, թաղական մատակարարութիւն։ Այս երեքէն՝ կեդրոնականն ու գաւառականը սահմանադրեալ են իրենց ժողովովը, որք կը սահմանեն իրենց տարեկան պիւճէն, կընտրեն իրենց գործադիր կամ մատակարար խորհուրդներն ու կը հսկեն անոնց վրայ անմիջական համարառութեամբ։ Իսկ թաղական մատակարարութիւնն՝ որ գուցէ ամենէն կարեւորն է, վասն զի հոն կը ծնի ու կըզարգանայ ազգային ոգին, սահմանադրեալ չէ։ Այսօր թաղական խորհուրդները թաղեցւոցմէ կընտրըվին և ուղղակի հսկող ու համարառու չունին, թաղին պիւճէն սահմանող մարմին մը չունին։ Եթէ այսպէս թողուի, անիշխանութեան դուռ մը բաց թողուլ ըսել է. և թաղեցիք՝ իրրև ընտրող՝ բնականապէս իրաւունք կունենան իրենց թա-

ղական խորհուրդին վրայ խուռն բազմութեամբ յարձակիլ և համարպահանջելու։ լաւ մտածենք այս վիճակին բնական և աղեռալի հետևանքը։ Արդէն իսկ թաղերէ ոմանք իրենց հաշիւը կախեալ դնելով եկեղեցւոյ լակերը, 'ի պաշտօնէ հրաւէր կը կարդան ամբոխին դիտաղութիւն կամ բողոք ընելու, եթէ ունին։ Ի՞նչ անզգուշութիւն, ի՞նչ մատակարարական դրութիւն, ի՞նչ հակասութիւն ոահմանադրական դրութեան։ Եթէ թաղեցւոցմէ 10, 20 հոգի բողոք ունենան՝ ո՞վ պիտի դատէ ատոնց բողոքը, թաղական խորհո՞ւրդը որ ամբաստանեալ պիտի դտնուի։ Եթէ կեդրոնական վարչութիւնը պիտի քննէ ատոնց բողոքը, համարեցէք թէ ամէն մէկ թաղէ 19, 20 բողոք գայ, ա՛լ վարչութիւնը իր բոլոր կեանքը թաղային բողոքներով պիտի զբաղէ և չը պիտի կարենայ մէջէն ելլել։ Անելանելի՛ ճամբայ, խառնակութեան, խռովութեան, անիշխանական բռնութեանց անսպառելի աղբիւր, և Սահմանադրութեան թշնամիներուն ձեռքը զանի բամբասելու և անարգելու վատ մը»։

Ռուսինեան էֆէնտիի այս դիտողութիւնները կատարելապէս արդարն են։ Մեր ներկայ թաղային դրութիւնը գոհացուցիչ վիճակի մէջ չէ։ ոչ միայն ժողովուրդն իւր թաղին և եկեղեցւոյն գործոյ ուղղապէս հըսկելու և իւր ընտրած մարմինէն կանոնաւորապէս համար ստանալու դըրից մէջ չէ, այլև, ինչպէս իրաւամբ դիտած է Ռուսինեան էֆէնտի, այդ ուղղակի հսկողութեան և համարառութեան պակասութենէն, շատ անգամ թաղելն անվերջանալի դժտութեանց, երկպառակութեանց և անիշխանական անկարգութեանց ասպարէզ կը դառնան, 'ի վնաս եկեղեցւոյ, վարժատանց և հասարակային գործոց։

Մեթէ տեսնուած չէ՞ շատ անգամ թաղերու մէջ, որ հինգ—տասն հոգի ժողովուելով թաղ. խորհրդարան կոխած, թաղային ընտրութիւնները բռնաբար խափանած։ օրինաւորապէս ընտրեալ թաղ. խորհուրդները ցրուած, վարժարանները դոցած են, և այլն և այլն։ Նոյնպէս տեսնուած չէ՞ն նաև թաղ. խորհուրդները, որք վարչական ժողովոց և խորհրդոց անդամներէն իրենց կուսակից և պաշտպան դանելով, ժողովրդեան արդար ձայնը խեղդելու և անոր իրաւանց վրայ բռնանալու ճիգեր ըրած և յաղթած, կամ առանց օրինաւորապէս հաշիւ և համար տալու ձգած գնացած են՝ ամէն բան երեսի վրայ թողլով։

Ահա այս անիշխանական անկարգ վիճակն աղէ՛ն մէջէն հիմնովին բառնալու համար Ռուսինեան էֆէնտի կառաջարկէ որ ամէն թաղ թաղային ժողով մ'ունենայ ժողովրդեան քուէով ընտրեալ, որոյ պաշտօնն ըլլայ թաղական խորհուրդն ընտրել, թաղին պիւճէն՝ այսինքն եկամուտքը սահմանել, թաղին մէջ ծագած և թաղ. խորհրդոյ ձեռնհասութենէն վեր եղած խնդիրներն ու վէճերը քննել, թաղ. խորհրդոյ տարեկան համարառութիւնն ստանալ, թաղին ընդհանուր գործերը վճռաբար տընօրինել և կեդրոնական վարչութեան տեղեկագրել։

Ռուսինեան էֆէնտիի այս առաջարկութիւնն ամենէն բանաւոր միջոցն է վերոյիշեալ տնտեղութեանց ընդմիշտ բարձման։ Այս միջոցով միայն կարելի է թաղերն յարատև բարեկարգութեան մէջ պահել, թաղային վէճերուն ու անկարգութեանց առաջքն առնուլ, և թաղ. խորհուրդներն օրինաւոր հսկողութեան և համարառութեան ներքև դնելով ժողովրդեան իրաւունքն և թաղին շահերն ապահովել, մինչդեռ հիմա այդ ապահովութենէն գրեթէ բոլորովին զուրկ են։

Կեդրոնական վարչութիւնը կարող չէ երբէք այդ անմիջական հըսկողութիւնն ընելու։

Ամենօրեայ փորձերով կը տեսնուի, որ վարչութեան ներկայացեալ թաղային քննդիրներն՝ ամիսներով և երբեմն տարիներով կը քշքշուին և շատ անգամ անուծանելի կը մնան։ իսկ Ցեռեսական խորհրդոյ համարառութեան և թաղային հաշուոց վաւերացման ի՞նչ ոլորմելի և անենչան բան մ'ըլլալն ըստ բաւականի բացատրած ենք նախընթաց թուով։ Ցեռեսական խորհրդոյ ըրածն համարառութիւն չէ, այլ պարզապէս կեղծիք մը։

Արդ՝ քանի որ կեդրոնական վարչութիւնը ժամանակ չունի թաղային գործոց զբաղելու և անոնց մէջ ծագած գժտութեանց, ապօրինութեանց և անկարգութեանց առաջքն առնելու, և քանի որ Ցեռեսական խորհուրդն ալ կարող չէ և ժամանակ չունի թաղային մատակարարութեանց վրայ ըստ արժանւոյն հսկելու և կանոնաւորապէս համարառութիւն ընելու, հետևաբար օրինաւոր և ձեռնհաս մարմին մը պէտք է այս ամենակարևոր հսկողութիւնն ու համարառութիւնն ընելու։ այն ալ մի միայն թաղային ժողովը կրնայ ըլլալ։ որ թաղեցիներէ կազմեալ ըլլալով թաղին մէջ գտնուելով, եկեղեցւոյն և վարժարանաց վիճակին և թաղ. խորհրդոյ պաշտօնավարութեան 'ի մօտոյ ծանօթ և տեղեակ ըլլալով, ամենէն աւելի յարմարութիւն ու ձեռընհասութիւն ունի արժան եղած հսկողութիւնն ու տնօրէնութիւնն ընելու։

Եթէ առարկուի թէ ոակաւաւոր թաղերու մէջ թաղային ժողով կազմելու յարմար բաւական անձինք չեն գտնուիր, Սահմանադրութիւնն արդէն առոր դարմանը ցուցած է դրացի թաղերու միացուցմամբ։

Վերջապէս, Ռուսինեան էֆէնտիի առաջարկութիւնը Սահմանադրութեան ոգւոյն և սկզբանց ըստ ամենայնի համաձայն՝, և թաղերու անդորրութեան, բարեկարգութեան և յառաջդիմական զարգացման միակ նպատաւոր միջոցն ըլլալով, քանի՞ այսոր ենք որ ազգային ժողովն անոր անժխտելի կարևորութիւնը պիտի ճանչէ, ընդունի, և իրրեւ հանրական օրէնք ազգային Սահմանադրութեան մէջ պիտի անցունէ։

ՄԱՍՆԱՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ի վերայ հանգուցեալ Ներսէսի 3 ըրէ կաթողիկոսի ոմանց Հայոց, պարոնք յակառապէս անյնի ոսնեն, որ դիպ նորա տօպ էրնոսուած է Պարսից պարբերաշրջան ժամանակ։

(Շար. տես Ամ. 1698)

«Ես յուսամ թէ նորին քահանայապետութիւնն ոչ թողուցու առանց պահանջելոյ յամենայն ստորագրողաց անտի առանձին առանձին զիր բերանց բողոքն զինէն պարզ պարագայիւք, որով քան շարեգականն լոյս ունին պայծառափայլ հանդիսանալ ամենայն բարեկեան մտակութիւնք իմ եկեղեցւոյ և ժողովրդեան ինձ յանձն եղելոց, այլ եթէ Բեհբուտեանք դուդուեալ իցեն զՍարատան, որ չէ այժմ բարեկամ իմ, որպէս՝ և յայտնի լինել կարէ՝ 'ի Պրէստաալէնիէ (Յարատարութիւն) կուսակային առ Նորին կայսերական մեծութիւնն յապագս մեր խաչի վերարի, ա՛չ դայր կարծիք զի նա հարկադրէ զնորին արքայնութիւնն՝ 'ի կատարումն կամոյ Բեհբուտեանց, վասնորոյ ես ոչ անդէպ համարեցայ ծանուցանել կանխաւ Նորին պայծառափայլութեան կնեազ Գոլիցինին յառաջ քան զայս»։

«Զեզ ևս ոչ անդէպ համարիմ ծանուցանել, զի թէ կարող ինչ իցէք, խնդիր 'ի դորձ ածցիք առ Նորին պայծառափայլութիւնն, որ թէ 'ի ներքոյ կայսերական թագաւորական իրաւագատութեանց ոչ կամիցի կորուսանել զի 46 ամեայ հոգեւորական մշակութեամբ ազգի իմոյ և եկեղեցւոյ համանդամայն և իմ ամենողորմած ապատինութիւնն ստուգածանման կայսերն ամենայն Ռուսաց, ոչ թողուցու զայս դորձ հին սովորութեանց բեհբուտեանց առանց օրինաւոր քննութեան, և մի՛ խնայեսցէ ինձ 'ի մէջ արդարութեան դատարանաց, միայն զի մի՛ զանցառութեամբ կամ առանց իրաւանց իրաւունքիմ և արդարութիւն եթէ ունիցիմ ես, որպէս և յուսացեալ եմ յԱստուած և 'ի ճշմարտութիւնն, նոքաւ աւետարանել թէ «ծանիջիք զճշմարտութիւնն և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ»։

«Ապաւեալապէս բախտաւոր լինիմ ես, եթէ յամենայն ստորագրողաց անտի, մանաւանդ թէ յամենայն հասարակութեան Հայոց իմում վիճակի մի առ մի հարցումն լիցի վկայութեամբ խաչի և աւետարանի վասն ամենայն գործոց իմոց առ եկեղեցին և առ ժողովուրդն ինձ յանձնեցեալ մինչև ցայսօր ժամանակի, քանզի եթէ այնպէս եկից ես առ լոյսն, ա՛յն իսկ եղիցի ինձ փառք 'ի փառս փառաւորելոյն յիւրումն ամենաբարերար ճշմարիտ հովուապետութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

«Այժմ ևս հեռի են 'ի գործոց անտի Բեհբուտեանց՝ կնեազ Արղութեանք, կնեազ Թումանեանք և կնեազ Աբամելիքեանք, ընդ օրս ազնիւք բաղումք և քաղաքացիք երևելիք շատք և հասարակութիւն, թողեալ զայնս՝ որք յետ ձեռագրելոյն՝ տեղեկացեալ զորպիսութենէն գրեցելոյն տարակուսեալ հոգւով հառաչեն և ձեռս առ Աստուած համբարձեալ աղաղակեն։ Ի վերջոյ թըշուառութիւն վիճակակաւոր արքեպիսկոպոսութեան տեղւոյս մինչև ցսկսանիլն իմ յայս պաշտօնն այսու կարողանամ պատկերացուցանել արժանաւորապէս, իմ սիրելեցեալ, զի յամենայն ժամանակն մեղիքութեան բեհբուտեանց՝ արքեպիսկոպոսութիւն Հայոց Վրաստանու եղեալ է որպէս ապրեկայ և արքեպիսկոպոսն ինքն որպէս ապրեկաբ, բեհբուտեանք իբրև զգ.օքաոր և գլուխ ամենայն բժշկապետաց, որ զինչ բնցեալա նոքա առաքեալ են առ արքեպիսկոպոսն, արքեպիսկոպոսն և ամենաւնչ սպասաւորեալ է այնմ բնցեպէ նոցա, ծանուցեալ զայն յատուկ պարտաւորութիւն ինքեան։ Ես յառաջնուն նուագի տեսանելով զբաղմութիւն գրութեանց կառավարութեանն առ Նախարդս իմ վասն համառօտելոյ զբաղմութիւն քահանայից Հայոց ըստ չափու հարկաւորութեան բազմութեան Հայոց ժողովրդականաց, 'ի խնդրելն Մելիքի վասն ձեռնադրութեան ուրուսմբն և ես և դայլ պատկանեալս արքեպիսկոպոսի, որպէս և գրեալ լինի յօրինակն որ ըստ այսմ, ապաւինեալ 'ի Նորին կայսերական հոչանաւորութիւն՝ վատահացայ յայտնել նոցա թէ՝ չեմ ես ապատեկար, այլ արքեպիսկոպոս, 'ի վերայ ամենայն արքեպիսկոպոսական պաշտօնն իմում երդուեալ յանուն Նորին կայսերական մեծութեան, և վասն այսորիկ եղէ ես նոցա առեալ և զօրացաւ 'ի վերայ իմ նախանձ և դառնութիւն սրտի նոցա մինչև ցայս ատաիճան, և աւելի քան զայս չնորհօք Աստուծոյ տիրական գլխոյն սրբոյ եկեղեցւոյ ակն ունիմ թէ ինքեանք իսկ բեհբուտեանք 'ի վերայ ամենայնի այսոցիկ չունիցին այլ ինչ պատճառ քնաւին արժանաւոր յիշատակութեան առաջի արանց արժանաւորաց ընդդէմ իմ։

«Ողջ լեր և զօրութիւն տեառն հզօրասցի 'ի քեզ, և ես եմ և եղեց վասն ձեր միշտ բարեացակամ

Աղօթարար

Արքեպիսկոպոս Հայոց

Վրաստանու

1816 ամի օգոստոսի 6 ՆԵՐՍԷՍ»

'ի Թիֆլիզ

Երկրորդ նամակն է կրկին առ նոյն բարեծնունդ գերազնիւ Յարութիւն Աստուածատուրեան, որ գրած է այսպէս։

«Ես յայժ անարդութեամբ եմ համբերեալ մինչև ցարդ, այժմ բարձրացաւ քան զգլուխ իմ և որպէս ինձ է հաւատի յաղագս ծառայութեան իմոյ և ամենողորմած թագաւորին իմոյ, վասնորոյ կարօտիմ ո՛չ թողացուցանել 'ի խաւարի զարդարութիւնն՝ եթէ ունիցիմ որպէս և համարիմ։ Իսպօրնիտէրնի Էկսպէտիցի այն գրէ ինձ կարճել զհամարձակութիւն և զյանդգնութիւն քահանայից իմոց, և ես 'ի կարճելս նեղիմ հաւատիկ։ Կնեազն գրէ յայտնել տէրութեան զհաշիւ արդեանց եկեղեցեաց, ես 'ի կամին տեղեկանալ, այսպէս անխնամ մատնիմ 'ի դատապարտութիւն, քանզի կորուսանողքն արդեանց առ 'ի պաշտպանել զիւրեանց օգուտն. ո՛չ խնայեն և զիս կորուսանել։ Գտանին ատ 'ի քաղաքիս կարծեմ աւելի քան զ10, պըսակաւ ունեցող զկրկին կանայս, որք առանց եկեղեցական իրաւանց և ընդդէմ կանոնաց Հայոց թողեալ զառաջինսն պսակեալ են ընդ այլում, որովհետև պսակադիր քահանայքն չեն ենթարկեալ 'ի ներքոյ երկիւղի արքեպիսկոպոսին կամ եկեղեցական իրաւանց։

«Ես զամենայն ազգ կառավարութեան հարատութիւնն կորուսեալ վասն բարեկարգութեան և վասն՝ արդարութեան ցանկացայ՝ սրբութեամբ առաջնորդութիւն վարել համաձայն կանոնաց, և ահաւասիկ անկանոն դատապարտիմ, եթէ ոչ ամենահայեաց Նորին կայսերական մեծութիւնն զիս պաշտպանեսցէ։

«Ես 'ի բաց մոռացեալ զհարկաւորսն վասն անձին իմոյ՝ խնդրեցի յիշխանաց մեծաբանողաց 'ի վերայ իմ զի ամենայն հարուստ տուն ազգիս մի մի մանէթ արծաթ ըստ իւրաքանչիւր տան միանգամ միայն, և ես խոստացայ 'ի Ռուսաստանէ, 'ի Հնդկաստանէ և յՕսմանցւոյ պատրաստել 'ի վերայ դուսմարելոցն յինքեանց 30 հազար բուբլի մանէթ, յաղագս կառուցանելոյ զհիմնաւոր ուսումնարան մանկանց հասարակութեան Հայոց 'ի լեզու Հայոց և Ռուսաց, և մեծ պատճառ թշնամութեան ընդ իս զայս աբսրին ազգ ասէր հակառակորդքն իմ։

« Քահանայ որ հնազանդեսցի իմոց յառաջադրութեանց՝ ատելի է յաչս նոցա, և որք չատագովք են այնպիսի* կամաց իւրեանց և խորատակողք լծոց հնազանդութեան օրինաց և արքեպիսկոպոսին, բռնադատեն զիս վարել խորհրդով նոցա։

« Զտունն Բէհբուտեանց 'ի մասին հոգևորական կառավարութեան պահանջեսցէ յինէն տերութիւնն, և ես յերաշխի դնեմ զանձն իմ զի առանց իրիք թերութեան վաղվաղակի դացի ամենայն ըստ ինքեան կատարեալ։

« Ողջ լեր, և ես եմ և ճնամ վասքն ձեր 'ի սրտէ բարեացակամ

Արքեպիսկոպոս Հայոց
Վրաստանու

1816 ամի օգոստոսի 16 ՆԵՐՍԷՍ »
'Ի Թիֆլիզ

Հէրմէս Բոռ։

ԸՅԼ ԵՒ ԸՅԼՔ

Անդղիական ՀանԹըլմէնս Մակալին պարբերականին մէջ հետևեալ հետաքրքրաշարժ տեղեկութիւնները կը գտնենք « Հետազօտութիւնք դրագիտական արուեստին շահուցը վրայ» մակագրով յօդուածի մը մէջ։

« Ուօ'լթըր—Սքօթէն 'ի վեր մինչեւ ցայսօր դրագիտական ասպարէզին մէջ հարստութիւն վաստկող անձանց թիւն այնքան քիչ է յԱնդղիա, որ մատներու վրայ կրնայ համրուիլ. և 'ի բաց առեալ զՈւալթըր—Սքօ'թ և զՏիքքէնս, մեր օրերը բնաւ չէ եղած դրագէտ մը որ միայն իւր դրչին շնորհիւ փոփի ձեռք բերած եկամուտին հաւասար եկամուտ մը պատրաստելու յաջողած ըլլայ։ Այժմեան ժամանակս քերթուածի մը համար վճարեալ ամենէն մեծ գումարը 3000 անգղիական ոսկի (75000 ֆրանք) է։ Այս ալ միայն Լա—Ռո—ի և Սքօթի մէկ բանաստեղծական գրուածին վճարուած է։ Իսկ փոփի իւր Իլիականն թարգմանութեամբը 5390 Անգ. ոսկի վաստկած է, և փոփի ժամանակուան (1700) 5000 Անգ. ոսկին այսօրուան 10000 ը կարժէ, որ ըսել է 250000 ֆրանք։

Սուիֆթ համեզեց զփոփ որ թարգմանած Իլիականին համար արքունեաց կողմէ առ նուազն 1000 կինէ ստանալու մինչև որ ապահով չըլլայ, Իլիականն և ոչ մէկ տող մը տայ տպագրութեան։ Փոփ կը պատմէ իւր յառաջաբանին մէջ թէ ինքը շատ առաւել պաշտպաններ գտաւ, որքան բնաւ գտած չէր նոյն ինքն Հոմերոս. և եթէ Հոմերի կուսակից և ջատագով հանդիսացած էին բոլոր հին դարուց մեծ հանճարները, իւր թարգմանութիւնը ալ փաստաբան ունէր իրեն ներկայ դարուս համայն դեղեցկութիւնները (կանայքը), հաճոյք այնքան մեծ, կը յաւելուր Անդղիացի բանաստեղծն, որ կարելի չէ փոխել որ և է համբաւոյ հետ։ »

Կէս 3000 Անգղ. ոսկի շահեցաւ իւր Պէկկարտ անուն դուստերդութեամբը, և օրին մէկն ալ 20000 ոսկի (500000 ֆր.) հարստութեան տէր եղաւ, զոր բոլորովին իւր գրչովը վաստկած էր։

Մեռած ատեն 3000 ոսկի տարեկան հասոյթ ունէր։ Եւ սակայն կէս իւր կենաց մեծագոյն մասը շռայլութեամբ ապրած և Աղէքսանդր Տիւմայի պէս ստակ վատնած էր։

Սուիֆթի իւր գործերէն շատին հեղինակութեան իրաւունքը Բրոդդրաքաճառին թողուց։ Իւր դրուածներէն ստակ վաստակելն եկեղեցական-նութեան անվայել համարելով, անոնց փոխարէն դրքեր միայն ընդունեց։

« Բնաւ երբէք բնիոն մը վաստկած չեմ դրուածներս, մէկ բացառութենէ մը զատ » կը գրէր 1735 ին առ Բիւլթընէյ, եւ այն բացառութիւնն ալ Կիւլլիվերի ճանապարհորդութիւնն էր։ Սուիֆթ այս երկասիրութեան ձեռագիրը Մօ'թթի ծախեց 300 անգղ. լիրայի, որոնք այս օրուան օշս սովորական վիպասանութեան մը միջին դինն է, և այդ գումարն իւր օրհաշուոյն մէջ անցուց իբր ամենաաչինչ բան մը, զորմէ հազիւ կարժէ խօսիլ։ Կրնար 1000 Ա. Լ. ալ բրցունել անկից, եթէ սակարկութեան մտնելուզէր անոր հետ, ինչպէս կընէր Պայրըն Մըրրէյի հետ։»

Մեր աղդին մէջ դրագիտական արուեստն առ այժմ շահ տալէ շատ հեռի է, և բարեբաղդ պէտք է համարի զինքը դրագէտ մը, եթէ իւր աշխատութեան հետ տպագրութեան ծախքն ալ վրայ չտայ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Կ. ՊՕԼԻՍ 25 ՅՈՒՆԻՍ 1875

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

Լիրան 100 ղրշէն

Բամպակ

Առանց Թարսուս։	հօխ.	7 1/4	
Վրաստ. Պարսկ.	»	6—6 1/2	
Պալըքէս. Կէյվէ։ Մայթոս	»	8—8 1/2	
Բուրդ լուացուած			
Բուռմէլի։	հօխ.	11 1/2—12	
Անատոլու։	»	12—12 1/2	
Բուրդ չլուացուած			
Էսկի Շէհիր	հօխ. 2 »	8 1/4	
Եօզղատ։ Էնկիւրիւ	»	7—7 1/4	
Քասապպաշի		11 1/2	Լ. 130
			Լ. 100
Բուրդ ոչխի (թիֆթիք) Էնկիւրիղրշ		50—52	
» » Բ. տեսակ	»	48—49	
» » Պէյազար։ Բասթ.		49—50	
» » Վան Եայլն		20—25	
Մորթ ոչխի։	10—14	Լ. Լ. 1	Լիր. 100
» դաւին զոյգը		—	» »
Մետաքս			
Պրուսայի	հօխան	400—480	Լ. 100
Բաֆրա։ Կէյվէ	»	180—260	»
Պարսկ. Սիրիա	»	Ֆր. 19—22	
Լոզակ չոր			
Պրուսա։ Սիրիա հօխան		50—65	130
Ծակած	»	45—	»
Ճէհրի			
Կեսարիա։ Էնկ. հօ.		13—14 1/2	110
Իսքիլիպ։ Թօղաթ	»	8—9 1/2	»
Գապի խէժ (քիթրէ)	»	40—45	»
Կանեփ Անատ.	»	4 1/2—5	130
Աֆիոն ա. տեսակ	»	400 —	100
» վար »	»	260—300	»
Կտաւատ։ քիլէ		36 1/2— 37	Լ. 130
Սուսամ օխ.		3 1/2—4	ղրշ. »
Անիսոն Հիւսոս։ օխան		6 1/2—7	»
» Բուռմէլի	»	4	»
» Անատ.	»	3	»
Քեմոն (քիմիոն)	»	4	»
Զէյթ Միսիսի և Աստրամիթ հօխ.		5 1/4—5 1/2	ղրշ. 107
» Կիրիտ հօխ.		5—5 1/4	» »
» Ռիոս	»	6—6 1/2	» »
» Մուտանեա		5 3/4—6	» »
» Յունաս. Վոլօս		5 3/4—6	»
Օճառ Ռանտիա հօխ.		4—4 1/4	»
Հանիա	» »	3 5/8—3 3/4	»
» Ռէթիմօ	»	4	» »
» Միսիսի	»	3 1/2—4	» Լ. 130
ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ			Լ. 100
Խաղվէ Ըիօ Ա. տես. 100 օխ.			1300—1350
» Բ. » » »			1220—1280
» Գ. » » »			1120—1180
» Եկմէն		16—17	»
Շաքար փոշի Հոլ. կենդ.		216—218	Լ. 104
» » Գաղղ. »		220—222	Լ. 103
» գլուխ 3 քիլ. »		248—	
» » 3 » »		255—	Լ. 100
Պղպեղ Ա. և Բ. տես. օխ.		7 1/2—8 1/2	»
Մեխակ (գարէնֆիլ) »		28—30	»
Խունկ կենդ.		240—280	»
Լեզակ (չիվիտ) պէնկ. »		115—135	»
» » Մատար. »		50—70	»
Ուրդան կարմիր (գըրմըզ)		40—45	Լ. 104
Բէնթրոլ (կապ) Ամեր. սնտ.		53—54 1/2	100
Սբարմաշէթ ըստ տես. »		64—95	»
Ալպակի »		19 1/2—20	Ֆր.
Զայ Ֆոնկօ հօխ.		18—23	Լ. 105
» Բէքքօ ծաղիկ »		45—140	»
Բրինձ ճէնով. 100 քիլ.		38—39	Ֆր.
» Հնդկ. » ղրշ		150—152	Լ. 100
» Եգիպտ. օխ. »		3—3 1/4	Լ. 120
Ռում Անդղ.		7 3/4 կալ.	103
» Ամեր. Թրիէստ		9—14	»
Կարագ եղ Սիպիր օխ.		14 3/4	105
» Թրիէստ և Ռում.		12—	»
Ճարպ Ռուս. հօխ.		9—9 3/4	»
» Բուռմէլի »		8—9	130
Խավիար Ա. տես. »		44—46	12
» Բ. » »		40—42	»
ՄԵՏԱՂՔ			
Երկաթ Թրիէստ սնտուկ		210—215	100
Զոդամէտ և շրջ. կենդ.		73—92—100	»
Ծրար »		78—80	Լ. 106
Ցախտակ »		105—110	»
Շվէտ ձող. և ծրար »		132—140	»
Պղինձ Անդղ. հօխ.		15—	100
Զինքօ 100 »		110—112	Ֆր.
Անագ կենդ. 640—			»
Կապար տախ. և խողով. »		155—160	104
Թանաք (թէնէքէ) Ղ սնտ.		300—305	100
Քարֆիցա Ն. 15/48 50 քիլ.		92—94	»
ԱՐՄՏԻՓ			100
Ցորեն կարծր։ Ազախ։ քիլ.		24—26	
» » Իսմայիլ »		24—26	
Կիրքա Ազախ »		25-28	
» Դանուբ »		24-26 1/2	
Կարծր։ Պալչըգ. Պուրկ. »		22-24	
» » Ռօսսոֆ. Ազբ. »		24-26	
Ցորեն կակուղ։ Դանուբ »		24—25 1/2	
» » Բուռմէլի »		23 1/2—24 1/2	
Եգիպտացոր. Դանուբ »		15 1/2—16	
» Բօթի։ Օրտու »		15 1/2—16	
» Բուռմէլի »		—	130
Գարի. Դանուբ »		15—15 1/2	
» Բուռմէլի		15—15 1/2	
Վարսակ (եուլ.) Անատ. »			
» Բուռմէլի		13—14	
Հաճար (չավտար) »		—	
ԱԼԻՒՐ			
Օմէկա Ա. տես. 60 հօխ.		118—120	Լ. 100
» Բ. » »		114—	»
» Գ. » »		105—110	»
Իպրայ. ըստ » »		93—103	»
Կապաց Ա. » »		103—	»
» Բ. և Գ. » »		90—96	»
Բենիկ Ա. » 60 հօխ.		92—96	100
» Բ. և Գ. » »		84—88	»
ՄԱՆԻՖԱԹՈՒՐԱ			
Մահուտի			
Թ.	3—7	փիլրէ 6 1/2—6 3/4	105
Մէքսիքան	4—9	« 6 5/8—7 1/2	»
Լոնկ Բլոթ	4—7 1/2	» 7 1/4—	»
»	6—10	» 6 3/4	»
»	8—12	» 6 7/8	»
Բամբակ մանած			
Եքսթրա Ն.	8—6/14	լիպ. 46—75	»
Վաթէր »		» 46—49	»
Եքսթրա »	16/24	» 62—112	»
Վաթէր »	»	» 73—75	»

Ա. Մեծ. Բաժանորդս Ս. Ներսէսեան
Սանոյց Ընկերութեան խնամակալ

Ընկերութեանս կարեւոր գործոց տնօրէնութեանն համար ընդհանուր ժողով գումարել հարկ ըլլալով, դիւանս պատիւ ունի հրաւէր կարդալ Մեծ. Բաժանորդաց, որ բարեհաճին յառաջիկայ կիրակէ Յունիս 29 ժամը երկուքին. Ս. Ներսիսեան վարժարանին սրահը հրամայել՝ ուր տեղի պիտի ունենայ ! Ընդհանուր ժողովոյ նիստը։

Խազիւղ 22 յունիս 1875

Ատենադպիր Ատենապետ
Ակնածելի Աբգարեան Ա. Ալեքսան Տէ-Բէրէ

ՇԱՏ ԱԺԱՆ ԶՐՀԱՆՆԵՐ

Ա. Մ. Մինասեան եւ Ընկերք կը ծանուցանեն արդոյ հասարակութեան որ ձեռքերնին գտնուած երեք հարիւրէն աւելի Ամերիկայի պատուական ջրհանները թէ նուազ եւ թէ շատ խողովակ հորերու յատկացեալ ամառուան եղանակին բոլորն ալ ծախելու համար շատ աժան պիտի տան։

Խողովակ հորերու ջրհանն՝ Անգղիոյ ջրհաններուն նման դժուարութիւններ չունենալով՝ շատ դիւրութեամբ կը հաստատուի ու երկար տեսն չաւրըւելով միշտ աղէկ ու դիւրաւ կը բանի։

Ա. Մ. Մինասեան և Ընկերաց
Ամերիկեան վաճառատուն
Ղալաթիա

ՇԱՏ ԱԺԱՆ ՔԱՐԵՕԼԱՆԵՐ

Ա. Մ. Մինասեան եւ Ընկերք կը ծանուցանեն արդոյ հասարակութեան որ ձեռքերնին գտնուած չորս հարիւրէն աւելի գանազան գեղեցիկ քարեօլաններն ամառուան եղանակին բոլորն ալ ծախելու համար սովորական գիներէն շատ աժան պիտի տան։

Ամերիկեան վաճառատուն
13 Ղալաթիա

ԻԼԱՆ

Թէոփիլանէի ամիրէ իշուն լուզումի օրուայ միւպայեա օրունաճաք օրան 167 թ ծանէլաթ սրճագ հավա Բիք թիմուրունն պէհէր թ ծանէլաթօսը 880 վէ 140 թ ծանէլաթ սօղուք հավա Բիք թիմուրունն պէհէր թ ծանէլաթ օսը 1900 զրուշա օլարաք թալիպի էօհտէսինաէ օրուպ թէմուզը բումինին պիրինճի սալը կիւնիւ դարարը գաթիսի վերիլէճէ յինաէն, իմա իմմէյէ թալիպ օլանլարըն եէվմի մէզքիւրտէ Տարի Շուրայի ասքէրիյէ կէլմէլերի։

20 Հազիրան 1875 1

Պապը Սէրասքէրի

Ասաբիրի Շահանէ էլպիսէ անպարընա լուզումի օրուպ միւպայեա օրունաճաք օրան էլլի պին ատէթ ատէրի սատատէթքէարը նէկրէսիմ կիւվէղ եիւն գուշաղն պէհէր ատէթի օնպէշէր ղրուշա օլարաք թալիպի էօհտէսինաէ օրուպ թէմուզը բումինին իւչիւնճիւ վէնճէշէնպիհ կիւնիւ գարարը գաթիսի վերիլէճէ յինաէն, իմա իմմէյէ թալիպ օլանլարըն եէվմի մէզքիւրտէ Տարի Շուրայի ասքէրիյէ կէլմէլերի։

21 Հազիրան 1875 1

Պապը Սէրասքէրի

Գաւիան ասքիք տէկիրմէնի իշուն լուզումի օրուպ միւպայեա օրունաճաք օրան 80000 զանթար նիւ. Գասթըլ մատատէն քէօմիւրինին պէհէր գանթարը օն իքի զրուշա օլարաք թալիպի էօհտէսինաէ օրուպ թէմուզը բումինին իքինճի ճէհարշէնպիհ կիւնի գարարը գաթիսի վերիլէճէ յինաէն, իմա իմմէկէ թալիպ օլանլարըն եէվմի մէզքիւրտէ Տարի Շուրայի ասքէրիյէ կէլմէլերի։

21 Հազիրան 1875 1

Պապը Սէրասքէրի

ԻԼԱՆ

Շիրքէթի թայրիյէ վաբօրլէրինատէն 29, 30 վէ 31 նիւմէրօլը քիւչիք վաբօրլէր սէյր ու թէնէզգիւհ իշլիւն իսմէք իտէնլէրէ էհվէն վէ մինասիպ իւճրէթ իլէ քիրայէ վերիլէճէկի ճիհէթլէ, թալիպ օլանլէրին շիրքէթի մէզքիւրէ իտարէսինէ միւրա-

Ճաաթ իյլեմէլէրի զբաղնատ իլանը քէյֆիյէթէ իյլթիսար քրլընը։

24 յունիս 1875

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ի ՍԻՆ

ԼԷՕՆ ԼԷՕՆԻ

Թարգմանեց Գ. Մսերեան

Զմիւռնիա

Տպագրութիւն Տէտէեան

Մանօն Լէսքոյի վէպը Հայերէնի թարգմանուելէ ետքը, գրեթէ ան-հրաժեշտ էր նաև Լէօն Լէօնիի թարգմանութիւնը՝ որ ժօրժ—Սանի ամենէն կատարեալ գործերէ մէկը կը համարուի։

Կարծես թէ Մանօն Լէսքոյի հեղինակն անցեալ՝ և ժօրժ—Սան ներկայ դարու նիւթականութեան դէմ կուզեն մրցիլ իրենց կրկին վկայութիւններովը հաստատելով սիրոյ տեւականութիւնը։

Կը գտնուի Կ. Պոլիս Զագմաքճըլար փողոց թիւ 16 Գալաֆեան եղբարց գրատունը, և Զմիւռնիա Տէտէեանց վաճառատունը։ Գին 12 ղրշ։

ԱՐՁԱՆԱԿԱՆՔ ՑԱՒԷՐԹԻՑ

ՌԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՔԵՐԹՈՒԱԾՔ

Լի չափս Հայկական նուէր Ռուսմասիրաց կաճառոյն

Երկասիրութիւնք

Տէրն Յովհաննու Վարդապետ Ճամպազեան

Յազգային կղերոյ Կ. Պոլսոյ

Ամեն Հայ գրավաճառաց քով կը գտնուի։ Գին մէկ արծ. Մէճիտիէ։

ՏԵԿՄԸՐԳԻՐ ԵՐԳՈՒՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հրատարակեաց Եր. Մ. Տէրոյեան

ՏԵՏՐ Ա.

Ամեն Հայ գրավաճառաց քով կը գտնուի։ Գին կէս արծաթ մէճիտ։

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՅ

ՆԻՒՍԷՅ ԵՒ ԸՆԿ.

Կատարեալագործութեան մեծ վկայագիր ստացած 1873ին Վիէննայի տիեզերական արուեստահանդէսին։

ՏԵՍԱԿԻ ԵՒ ԳԻՆԸ

Պարզ մեքենայ, 3,3 անգ. լիրա։

Նոյն յենարանով և ընկուզէնիէ սեղանով, որ կրնայ թէ՛ ձեռքով և թէ՛ ոտքով շարժիլ, 4,10։

Նոյն կկոցաւոր, կատարելագործեալ, 4,40 լիրա։

Նոյն յենարանով 5,11 լիրա։

Նոյն նորագոյն 'ի պէտս ընտանեաց, 7,10 լիրա։

Նոյն Տիւտոր կոչուած, 8,10 լիրա։

Նոյն Ուէլէր և Ուիլսըն կոչուած 6,6 լիրա և աւելի։

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՈՒՐ

ՁԻԹԼԻԻ

ՊՐՈՒՍԱՑԻ ՄՕՏ

Կայսերական հրամանագրով վարձեալ

Այս հանքային ջուրն Եւրոպայի մէջ գտնուած միւսներուն կարգի ջրոց հետ կրնայ մրցիլ իւր բուժական յատկութեամբ։

Կը վաճառուի մեծ եւ փոքր քանակութեամբ՝ Կ. Պոլիս՝ վարձակալ ընկերութեան կեդրոնատեղին Սուլթան Համամ թիւ 11, Կ. Պոլիս Լէնիճամի փողոց թիւ 16, 18, 20 եւ 22 Տէլլա Սուտայի դեղարանը եւ մայրաքաղաքիս ամեն դեղարանները։

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1875 ՅՈՒՆԻՍ 1 ԿԻՐԱԿԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆԻՍ 30

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Բոփորէն էջնոզ շոգենաւերը

11 Եէնիմահալլէէն Պէօյիւքտ. Թարապիա, Եէնիք. Սմէէն. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք, Արնաւուտք. Օրթաքէօյ, Պէշիկթաշ։

11 30 Արնաւուտք. Գարբուչ. Օրթաքէօյ, Պէշիկթաշ, Գապաթաշ,

11 30 Պէյքօզէն, Բաչապ. Ռիֆ. փաչա մահալ. Գանլը Ա. Հիսար, Գանտիլ. Վանիք. Զէնկէլ. Պէյլէրպէյ, Գուզկունճուք։

12 Եէնիմահալլէէն Մէզարպ. Պէօյիւք. Թարապ. Եէնիքէօյ, Պոյաճ. Ր. Հիսար. Պէպէք Արնաւ. Գուրուչէշմէ, Օրթաքէօյ Պէշիկթաշ։

1 Ր. եւ Ա. Գաւաքէն Եէնիմահ. Պէօյիւք. Թարապ. Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք Արնաւ. Գուր. Օրթ. Պէշիկ։

1 Պէյքօզ, Բաչապահճէ, Գանլըճա, Ա. Հիսար, Գանտիլի, Վանիքէօյ, Զէնկէլքէօյ, Պէյլէրպէյ, Գուզկունճուք։

1 30 Արնաւ. Զէնկէլքէօյ, Պէյլէրպէյ, Օրթաքէօյ. Գուզկունճուք, Պէշիկթաշ, Գապաթաշ։

2 15 Պէօյիւքտէրէ. Թարապ. Պէյքօզ, Բաչապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ։

2 30 Եէնիմահալլէէն Մէզարպ. Պէօյիւքտ. Թարապիա, Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Արնաւ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ. Գապաթ։

3 45 Պէօյիւքտ. Պէյքօզ, Բաչ. Ր. փաչա մահ. Գանլ. Ա. Հիսար. Գանտ. Վանիք. Զէնկէլքէօյ, Պէյլէրպէյ։

3 45 Եէնիմահալլէ Պէօյիւք. Թարապ. Եէնիք. Սմէէն. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք. Արնաւ. Օրթաք. Պէշիկ։

4 30 Ր. եւ Ա. Գաւաքէն Եէնիմահ. Պէօյիւքտ. Թար. Պէյքօզ, Եէնիք. Պոյաճ. Ր. Հիսար, Արնաւ Գուր. Օրթաք. Պէշիկ։

5 45 Պէօյիրիքտէրէ. Թար. Եէնիքէօյ, Էմիրկ. Ր Հիսար, Արնաւ. Պէյլէրպ. Օրթաքէօյ, Պէշիկթաշ։

6 15 Եէնիմահալլէէն Պէօյիւքտ. Թարապ. Պէյքօզ. Եէնիքէօյ Էմիրկ. Գանլըճա. Ր. Հիսար, Գանտ. Արնաւ. Պէյլէրպ. Օրթաքէօյ, Գուզկունճուք, Պէշիկթաշ. Իսկիւտար։

8 Եէնիմահալլէն Մէզարպ Պէօյիւք. Թարապ. Եէնիք. Էմիրկ Ր. Հիսար, Պէպէք, Արնաւ Գուր. Օրթաքէօյ. Պէշիկթաշ։

8 45 Պէօյիւքտէրէէն. Պէյքօզ. Բաչապ. Զուպուգլու. Գանլ. Ա. Հիսար. Գանտիլի Վանիքէօյ. Զէնկէլքէօյ. Պէյլէրպէյ. Գուզկունճուք. Իսկիւտար։

9 Պէօյիւք. Թարապ. Պէյքօզ Բաչապ. Զուպ. Արնաւ. Օրթաքէօյ Պէշիկթաշ։

10 Եէնիմահալլէէն. Պէօյիւք. Թարապիա Եէնիք. Էմիրկ Ր. Հիսար Պրն. Օրթաք. Պէշիկ.

10 30 Պէօյիւքտէրէ, Պէյքօզ. Բաչապ. Ռիֆ. փաչա մահ. Գանլրճա, Ա. Հիսար, Գանտ. Զէնկէլ. Պէյլ. Գուզկ. Իսկ.

10 45 Եէնիմահալլէ, Պէօյիւքտէրէ. Թար. Եէնիք. Էմիրկ Արն. Օրթ. Պէշիկ.

Կոմուրջէն ելնող շոգենաւերը

12 Պէշիք. Օրթաք. Արնաւ. Պէպէք, Ր. Հիսար Էմիրկ. Եէնիք Թարապ. Պէօյիւքտէրէ. Եէնիմահ.

12 45 Գապաթաշ. Իսկիւտար. Պէշիքթաշ. Գուզկունճուք. Օրթաքէօյ. Պէյլէրպէյ. Զէնկ. Արնաւ. Գանտիլի. Ր. Հիսար. Գանլըճա. Էմիրկէն, Եէնիքէօյ. Պէյքօզ Թարապիա. Պէօյիւքտէրէ. Եէնիմահալլէ։

1 15 Պէշիք Օրթաք. Արնաւ. Պէպէք. Ր. Հիսար. Պոյաճ. ԸՍԹԷՆ Եէնիք. Թարապիա. Պէօյիւքտէրէ. Եէնիմահալլէ։

1 30 Իսկիւտար Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Ա. Հիսար, Գանլըճա, Բաչապ. Պէօյիւքտ.

2 15 Պէշիկ. Օրթաք. Գուր. Արնաւ. Պէպէք. Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թար. Պէօյիւքտ. Եէնիմահ, Ր եւ Ա Գաւաք։

3 30 Իսկիւտար. Գուզկունճուք. Պէյլէրպէյի Զէնկէլքէօյ Վանիքէօյ. Գանտիլ. Հիսար. Գանլրճ. Զուպուքլու, Բաչապաղչէ. Պէյքօզ Պէօյիւքտէրէ։

3 15 Պէշիկթաշ, Օրթաք. Արնաւ. Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէօյիւք. Եէնիմահ։

4 45 Պէշիկթ. Օրթաք Արնաւ. Պէպէք Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիքէօյ. Պէյքօզ, Թարապ. Պէօյիւքտ. Եէնիմահ.

5 30 Գապաթաշ, Իսկ. Պէշիկթաշ, Գուզկ. Օրթ. Պէյլ. Զէնկ, Արնաւ. Ր Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ Պէօյիւքտ։

6 45 Պէշիկթաշ, Օրթաք Արնաւ. Գանտ. Ր. Հիսար, Պոյաճրք. Եէնիք. Թարապ. Պէօյիւքտ. Եէնիմահ։

8 45 Պէշիկթաշ, Օրթաք. Արնաւուտքէօյ, Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիքէօյ. Թարապիա, Պէօյիւքտէրէ, Եէնիմահ։

9 30 Պէշիքթաշ. Օրթաքէօյ Գուրուչէշմէ, Արնաւ. Հիսար. Պոյաճ. Եէնիք. Թարա. Պէօյիւ. Եէնիմահ. Ր. եւ Ա. Գաւաք։

9 30 Գապաթաշ, Գուզկ. Պէյլէր. Զէնկէլ. Վանիք. Ա. Հիսար, Գանլ. Բաչապ. Պէյքօզ։

10 35 Պէյլէրպէյ. Զէնկէլ. Վանիք. Գանտիլի. Ա. Հիսար Գանլ. Զուպ. Բաչապ. Պէյքօզ. Թարապ. Պէօյիւքտէ.

10 30 Պէշիքթաշ. Օրթաքէօյ. Արնաւուտ. Պէպէք. Ր. Հիսար, Էմիրկ. ՍԹԷՆ. Եէնիք. Թարապիա. Պէօյիւք. Եէնիմահալլէ

11 Գուզկունճուք. Պէյլէրպէյ, Զէնկէլքէօյ, Վանիքէօյ, Գանտ. Ա. Հիսար, Գանլրճա, Բաչապահճէ, Պէյքօզ։

11 Պէշիկթաշ Օրթաքէօյ. Գուրուչ. Արնաւուտքէօյ. Պէպէք. Ր. Հիսար. Էմիրկ. Եէնիք. Թարապիա Պէօյիւքտէրէ։

11 30 Գապ. Պէշիկթաշ, Գուզկ. Օրթ. Պէյլէրպէյ, Զէնկ, Արնաւ.

12 Պէշիքթաշ, Օրթաքէօյ, Արնաւուտք։

Իսկիւտարս ելնող շոգենաւերը երթեւեկումը։

Ժամ	Իսկիւտարէն	Կոմուրջէն	Ժամ	Կոմուրջէն	Իսկիւտար
11	30		11	45	
12			12	15	
12	30		12	40	
1			1	15	
1	25		1	45	
2			2	10	
2	30		2	45	
3			3	15	
3	30		3	40	
4			4	15	
4	30		4	45	
5			5	15	Պէշիկթաշ հանգիպելով
5	30		6		
6	5		6	40	
6	45		7	45	
8			8	15	
8	30	Պէշիկթաշ հանգիպելով	8	40	
9			9	15	
9	25		9	45	
9	50		10	10	
10	15		10	35	
10	35		10	50	
11			11	10	
11	20		11	35	
11	35		11	50	
12			12	5	

Այս լրագիրը չաբաթը երեք անգամ կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը։ Բաժանորդագրութեան տեղերն են Կ. Պոլիս Զինթիլի խանվերի տարկը թիւ 15 Մատեանի խմբագրատուն

Իսկ գաւառաց մէջ հեռաւոր հոգաբարձուաց սենեակները։

ԻԶՄԻՐ. Յակոբան ագա Տէտէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Խաչատուր էֆ. Լակիճեան.
ՊՐՈՒՍԱ. Սուրէնեան ագա Թանկէրեան.
ԹԷՔԻՐՏԱՂ. Յովակիմ ագա Ուզունարդեան.
ՏՐԱՊԻԶՈՆ. Խաչատուր աղաէլմանեան
ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Զաքարեան.
ՎԱՆ. Կարապետ ագա Նաթանեան.
ՄՈՒՇ Մկրտիչ ագա Փոթիկեան
ԵԱԾ Մ. ագա Խաչիկեան.
ՖՈՒՏՋԱՆ Մկրտիչ ագա Այվազեան.
ԵՐԶՆԿԱՅ. Թագէոս ագա Բագրատունի.
ՍԻՎԼԻՒԷՍՍԸ Եր. Ֆ. Ռարբէն.

Բերիչ քաղաքներէ ստորագրուելիք ուղղերն առ տեղերէն մէկուն հետ կրնան թղթակցիլ։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

Կ. ՊՕԼԻՍ ՀԻՆԳԻԼԻ ԹՈՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԻՉՆԵՐ

NORTH BRITISH AND MERCANTILE INSURANC COMPANY

ՆՕՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԵՒ ՄԷՐՔԷՆԹԱՅԻ

Լոնդրայի և Լիվերպուլի ապահովութեան ընկերութիւն Անգ. Լբ.

Բաժանորդագրեալ դրամագլուխ	2,000000
Վճարեալ դրամագլուխ	250,000
Պահեստի դրամ հրդեհի ճիւղէն գոյացեալ	596,000—846,000
1872ին հրդեհի զուտ հասոյթը	794,000

NORTHERN

ASSURANCE COMPANY

ՆՕՐԹՀԸՐՆ

Լոնդրայի և Լիվերպուլի ապահովութեան ընկերութիւն Անգ. Լբ.

Բաժանորդագրեալ դրամագլուխ	2,000000
Վճարեալ դրամագլուխ	100,000
Պահեստի դրամ հրդեհի ճիւղէն գոյացեալ	230,000—330,000
Զուտ հասոյթ 1872ի	270,000

Ստորագրեալք իրենց բազմաթիւ յաճախորդաց և այս քաղաքիս ընդհանուր հասարակութեան կը ծանուցանեն որ իրենք վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուին, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանեն։

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալովն՝ ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բռնողներու ինքզինք ներկայացունել։

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնք կրնան ընդունուիլ ինչպէս Բերայի Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները գիւղերը և գաւառները։

Գիներուն և աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմք կ՝ դիմել Միացեալ ընկերութեանցս գրասենեակը Ղալաթիոյ Բէրշէմպէ բազարի մօտ Պաֆանի խան թիւ 3։

Լիազօր գործակատար

Վ. Ռ. ՍՈՒԱՆ